

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՉԱՓԱԶԱՆՅՈՒԹՅԱՆ ԽՄԱՍՏԱ-
ՌԱՄԱՊԵՐԱՐԱՅԻՆ ԴԱՇՏԻՆ ՀԱՏՈՒԿ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ

Վ.Մ. Օհանյան

Լեզվային երևույթների համակարգային նկարագրությունը ժամանակակից լեզվագիտության ամենախոշոր ձեռքբերումներից մեկն է: Լեզվի մասին գիտության զարգացման ներկա ընթացքը վկայում է լեզվային երևույթների համակարգային նկարագրության նկատմամբ լեզվագետների կողմից անընդհատ աճող հետաքրքրության մասին:

Այն, որ բառերը չպետք է ուսումնասիրվեն իրարից մեկուսացված, այլ իրար հետ հարաբերակցված, նկատել են շատ վաղուց: Դեռ XIX դարի երկրորդ կեսին Մոսկվայի ռուսալուսարանի պրոֆեսոր Մ. Մ. Պոկրովսկին նշել է իրար հետ բովանդակությամբ կապված բառերի իմաստային զարգացման ընդհանուր օրինաչափությունները: Բայց բառապաշարը՝ որպես միասնական համակարգ, ներկայացնելու առաջին փորձերը կատարվել են միայն XX դարում: Այդ փորձերից ամենաակնառուները պատկանում են գերմանացի հայտնի լեզվագետ Ի. Տրիքին, ում աշխատանքները նվիրված էին իմաստային դաշտի տեսության սշակմանը [1] (էջ 5):

Ինչպես հայտնի է, «դաշտ» հասկացությունը լեզվագիտության մեջ մտցրել է Գ. Իպսենը [1924թ.: Տրիքի մոտ «դաշտի» գաղափարը ծագել էր դեռ 1923թ., չնայած այդ խնդրին մտաբերյալ նրա աշխատանքները լույս են տեսել միայն 30-ականների սկզբին: Ըստ Տրիքի, բառերը խոսողի կամ լսողի գիտակցության մեջ գոյություն ունեն ոչ թե առանձին-առանձին, այլ իմաստով իրար հետ կապակցված: Արդյունքում Ի. Տրիքը լեզվային դաշտ է անվանել զարգացած իմաստների խումբը (Sinnverwandte) կամ ինչ-որ իմաստային ոլորտը (Sinnbezirk):

Ի. Տրիքի դաշտի հասկացությունը լայն օգտագործում է տուսցել լեզվաբանական ուսումնասիրություններում: Սակայն ժամանակակից լեզվաբանական տերմինաբանության տեսանկյունից Ի. Տրիքի դաշտը ավելի ճիշտ կլիներ կոչել իմաստա-բառապաշարային, այլ ոչ թե իմաստային կամ հասկացությունների դաշտ, քանի որ այդ դաշտներում *իմաստային* (հասկացությունների) սկզբունքով միավորված է *բառապաշարը* [4] (էջ 27):

Հաշվի առնելով դաշտի վերաբերյալ բազմաթիվ մեկնաբանություններն ու նկարագրությունները Ի. Լյոբզևան սահմանել է իմաստային դաշտի հետևյալ հիմնական հատկությունները.

- դաշտ կազմող բառերի միջև իմաստային հարաբերություններ,
- այդ հարաբերությունների համակարգայնություն,
- բառային միավորների միջև փոխկապակցվածություն,
- դաշտի հարաբերական ինքնուրույնություն,
- դաշտի իմաստային տարածության անընդհատություն,

• ամբողջ բառապաշարի սահմաններում իմաստային դաշտերի փոխկապակցվածություն [2] (էջ 99):

Խոսելով ժամանակակից անգլերենի չափազանցության իմաստա-բառապաշարային դաշտի մասին՝ նախ և առաջ պետք է նշել, որ այդ դաշտը կազմող բառային միավորների համար ընդհանուր իմաստային հատկանիշը *չափազանցությունն է, այսինքն՝* աստրկայի, ներկայի, որակի նորմալ, սովորական վիճակից շեղումը դեպի մեծացում, շատացում, բարձրացում՝ *mania* «մոլազարություն», *fanatic* «մոլեռանդ» *obsessive* «համակված, մոլեգնած», *worship* «երկրպագել, պաշտել», *exceedingly* «չափազանց մեծ»: Oxford Advanced Learner's Dictionary of Current English բացատրական բառարանը տալիս է վերոնշյալ բառերի հետևյալ բացատրությունները.

mania - n 1) ինչ-որ բանի համար *չափազանց ուժեղ* գանկություն-հոմ. enthusiasm 2) մտավոր հիվանդություն, որի ժամանակ ինչ-որ մեկը համակվածություն ունի ինչ-որ բանի նկատմամբ, որն էլ նրան դարձնում է *չափից ավելի* հուզված, դաժան կամ շփոթված:

fanatic - n 1) անձնավորություն, ով ունի *շատ մեծ* խանդավառություն ինչ-որ բանի համար, 2) անձնավորություն, ով ունի *ծայրահեղ* վտանգավոր կարծիքներ - հոմ. extremist, obsessive - adj ինչ-որ կոնկրետ մարդու կամ առարկայի մասին *չափազանց շատ* մտածող,

worship - v 1) *շատ, անմոռաց* սիրել ինչ-որ մեկին և ինչ-որ բանով *շատ* հիանալ,

exceedingly - adv ծայրահեղորեն, *չափից ավելի*:

Բոլոր վերոնշյալ բառային միավորները անգլերենի չափազանցության իմաստաբառապաշարային դաշտի ներկայացուցիչներ են. նրանք բոլորն էլ օժտված են բովանդակային ընդհանրությամբ, իսկ ավելի կոնկրետ, նրանք բոլորն էլ ունեն *չափազանցություն* իմակ:

Ինչպես տեսանք, անգլերենի չափազանցության իմաստաբառապաշարային դաշտը ներկայանում է գոյականներով, ածականներով, բայերով և մակբայներով: Այս դաշտն ուսումնասիրելիս հատուկ հետաքրքրություն են առաջացնում չափազանցության, հավելությունների իմակով օժտված նախածանցներով (super- (superheroic «գերհերոսական»), multi- (multimillionaire «բազմամիլիոնատեր»), over- (overdeep «չափից ավելի խոր») և այլն) բառակազմական կաղապարները:

Բառակազմության՝ որպես լեզվագիտության առանձին բաժնի հիմնական հասկացություններից են կաղապարը (մոդելը) և կաղապարումը (մոդելացումը): «Բառակազմությունը ձևավորվում, ապրում և զործում է որպես հիմնավորված անվանումների կաղապարման ոլորտ» [3] (էջ 55):

Նոր բառերի կազմումը լեզվում շատ դեպքերում իրականացվում է որոշակի նմուշների տեսքով ներկայացված, արդեն գոյություն ունեցող բառերին համապատասխան: Նման նմուշները դիտարկվում են որպես կոնկրետ բառային բովանդակությունից վերացաբեկված ինչ-որ կառուցվածք՝ բառակազմական կաղապար (մոդել), որը, ըստ Մ. Դ. Ստեփանովի, «տիպային կառուցվածք է՝ օժտված ընդհանուր բառ-կատեգորիական բովանդակությամբ և, տարրերի իրար հետ զուգակցման որոշակի օրինաչափությունների առկայության դեպքում, ունակ լցվելու զանազան բառապաշարային նյութով (այսինքն՝ զանազան բառային հիմքերով)» [5] (էջ 522):

Անգլերենի չափազանցության իմաստաբառապաշարային դաշտին հատուկ են չափազանցություն և հավելություն արտահայտող arch-, over-, super-, hyper-, ultra-, extra-, multi-, poly-, extra-, maxi-, mega- նախածանցներով և macro- կիսանախածանցով (նախածանցակերպով) նախածանցային կաղապարները: Էլեմենշյալներից ամենաարդյունավետ կաղապարները over-, super-, ultra- նախածանցներովն են:

over+adj, over+n կաղապարներ

Over- նախածանցը օգտագործելի է, ինչպես ածականների, այնպես էլ գոյականների հետ:

over+adj *աժականների կաղապար*

over-ambitious «չափից ավելի փառասեր», over-attentive «չափից ավելի ուշադիր»:

He had become over-ambitious in his old age (J.H.Chase). Earnshaw found him at last standing before a window with his over-attentive aide, young Wiggins (I.Wallace):

over+n *գոյականների կաղապար*

overcentralization «չափից ավելի կենտրոնացում», overchoice «շատ մեծ ընտրություն», overstability «գերկայունություն»

Հարկ է նշել, որ over- նախածանցը լայն իմաստային զուգակցվողություն ունի անվանական հիմքերի հետ (over-ambitious, over-attentive, overchoice, overcentralization, overstability), ինչին մեծապես նպաստում է over- նախածանցի իմաստը: Այս ամենը նախադրյալներ է, ստեղծում վերը նշված կաղապարների բարձր արդյունավետության համար:

Այս կաղապարներին վերաբերող բառերը կազմում են զանազան բառապաշարային շերտեր՝ ընդհանուր գործածական (overchoice, over-ambitious), տնխնիկական (overbalance «ավելարաշ»), կենսաբանական, բժշկական (overstress «զերվարժածություն»):

super-¹n, super-¹adj կաղապարներ

super-¹n գոյականների կաղապար

super-club «բարձր դասի ակումբ», super-cult «զերկուր», super-government «չափից ավելի կազմակերպված կառավարություն»

People used to indicate that super-club, super-cult, super-government was not exactly a club or cult or government (I.Wallace).

super-¹adj ածականների կաղապար

super-dangerous «չափից ավելի վտանգավոր», super-intelligent «զերխելացի, զերբարգացած»

The cruise missile is a super-dangerous weapon (Daily World). It is possible that in the universe there are planets populated by super-intelligent beings (Daily World).

Այս կաղապարներին պատկանող բառերը վերաբերում են ինչպես ընդհանուր գործածական (super-club, super-government, super-dangerous), այնպես էլ գիտա-տնխնիկական բառապաշարին (superheavy «զերծանր», supersonic «զերժանր», supermolecula «մակրոնոլեուլա»):

ultra-¹adj, ultra-¹n կաղապարներ

Ultra- նախածանցը գոյակցվում է գոյականական և ածականական հիմքերի հետ:

ultra-top-secret «զերգաղտնի», ultra-high-level «բազառալես բարձր մակարդակի»

We've just learned from a source high up in the State Department that an ultra-top-secret and ultra-high-level conference has been set between representatives of the United States and representatives of Communist China (T.Conway).

Ultra- նախածանցը «փորը, ոչ մեծ չափի» նշանակություն ունեցող բառերի հիմքերի գոյակցությամբ այդ հիմքերին տալիս է «շատ փորը» իմաստը (ultraminature «շատ փորը», ultra-short «շատ կարճ», ultravisible «համարյա անտեսանելի»):

Այսպիսով, այս նախածանցը (և մյուս նախածանցները, օրինակ՝ super- (superfine «զերնուրը»)) ընդհանուր առմամբ արտահայտում է ինչ-որ բանի չափից ավելի մեծ կամ փորը լինելու գաղափարը, այսինքն՝ նորմալից դեպի այս կամ այն կողմը թքզվելու գաղափարը: Այս նախածանցով կաղապարի լայն բառակազմական նշանակությունը կարելի է սահմանել՝ «շատ, չափից ավելի մեծ, շատ, չափից ավելի փորը», բայց քանի որ հիմքերի մեծամասնությունը, որոնց հետ գոյակցվում է, այս նախածանցը, օժտված են «չափից ավելի մեծ» իմաստով, ուստի հենց այս կաղապարն էլ հիմնականում ներկայանում է հավելությունային, չափազանցության իմաստով:

Որպես կանոն, այս կաղապարի բառերը վերաբերում են գիտա-տնխնիկական և հասարա-բաղաբական բառապաշարներին (ultraclean «շատ դիպուկ», ultralein «ծայրահեղ ծայս գաղափարով»):

multi-¹adj, multi-¹n կաղապարներ

Այս կաղապարների բառակազմական իմաստը ավելի կոնկրետացված է, քան super-, ultra-, over- նախածանցներով կաղապարներինը: Վերնոշյալ կաղապարների իմաստը կայանում է «շատ, մի քանի անգամ ավելին» լինելու մէջ:

Multiracial «բազմառասայական», multilevel «մի քանի մակարդակ ունեցող», multi-industry «բազմադորտային», multifarm «բազմակերպ»:

Multi- նախածանցով բառերը հիմնականում պատկանում են գիտական (multiengine «բազմաշարժիչ», multilayer «բազմաշերտ», multidimensional «բազմադրածական»), ինչպես նաև հասարա-բաղաբական բառապաշարներին (multinational «բազմազգ», multicultural «բազմաշակութային»):

Multi- նախածանցը ունի նույն «շատ» իմաստն ունեցող մի շարք հոմանիշ նախածանցներ, վերջիններիս յօվին են պատկանում poly- կիսանախածանցը (polyether «բազմերթ», polysyllable «բազմավանկ բառ», polychromatic «բազմերանգ»): Այս կաղապարի բառերը, որպես կանոն, արտահայտում են զանազան գիտական հասկացություններ, և այս

կադապարի արդյունավետությունը հիմնականում սահմանափակվում է գիտական բառապաշարի ոլորտով:

Տրված կադապարներին մի ուրիշ հոմանիշ կազմավորում կարելի է համարել «many» հաճախական բաղադրիչով կադապարը: Վերջինս շատ հաճախ արտահայտվում է բարդաձանցավոր ածականներով (many-sided «բազմակողմ», many-coloured «բազմագույն», many-windowed «շատ պատուհաններ ունեցող»): Ծնորհիվ «many» բաղադրիչի իմաստի այս տիպի բարդ ածականները պատկանում են ընդհանուր գործածական բառապաշարին [6] (կշ 204-209):

Ամփոփում

Այսպիսով, ժամանակակից անգլերենի չափազանցության իմաստա-բառապաշարային դաշտը կարող է ներկայանալ գոյականներով, ածականներով, բայերով և մակբայներով: Այս դաշտին հատուկ չափազանցության ու հավելորդության իմակով օժտված նախաձանցները լայն իմաստային գույակցվորություն ունեն անվանական հիմքերի հետ, որն էլ նախադրյալներ է ստեղծում այդ նախաձանցներով բառակազմական կադապարների բարձր արդյունավետության համար:

Резюме

Итак, в современном английском языке лексико-семантическое поле чрезмерности может представиться существительными, прилагательными, глаголами и наречиями. Префиксы, свойственные этому полю, с семами избыточности и чрезмерности имеют широкую смысловую сочетаемость с именными основами, что и создаёт предпосылки для высокой продуктивности словообразовательных моделей с этими префиксами.

Ծանոթագրություն

1. Հ. Ա. Ասմանգուլյան, Մ. Ի. Հովհաննիսյան, Անգլերեն-Հայերեն Բառարան - խմբագրությամբ, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1991:
2. Ա. Ս. Ղարիբյան, Ռուս-Հայերեն Բառարան - խմբագրությամբ, Երկրորդ հրատարակչություն, Երևան, «Հայաստան», հրատարակչություն, 1977:
3. Sixth edition A. S. Hornby: edited by Sally Wehmeier: Oxford Advanced Learner's Dictionary of Current English, Oxford University Press, 2000.

Գրականություն

1. Гольдберг В. Б. Контрастивный анализ лексико-семантических групп. Тамбов, Тамбовский ордена «Знак Почета» государственный педагогический институт, 1988
2. Кобозева И. М. Лингвистическая семантика. Москва, © Эдиториал УРСС, 2000
3. Кубрякова Е. С. Части речи в ономаσιологическом освещении. Москва, © Наука, 1978
4. Попова З. Д. Полевые структуры в системе языка. Воронеж, Издательство Воронежского университета, 1989
5. Степанова М. Д., Зуев А. Н., Молчанов И. Д. Словарь словообразовательных элементов немецкого языка. Москва, Издательство: "Русский язык", 1979
6. Царев П. В. Продуктивное именное словообразование в современном английском языке: Москва, Издательство Московского университета 1984

Արդ Հ. անգլերեն լեզվի ամբիոն